



10(703)
2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ զխրատը, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԻՍՏԻՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

Հովանանես ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՉԱՐԱՆ ԲԼՔՈՒԼ

(Հատված անավարտ պոեմից)



Սուկաց արքան, ծեր,
բազմափորձ մարդիկ կանչեց իր
ատյան,
- Ո՛վ է, ասավ, ձեզմից տեսել
կամ իմացել էսպես բան.
Ինչ պատիժ է, որ գալիս է ինձ
ու երկրիս բովանդակ,
Եվ ինչ ճար կա < . . . >

Խոնարհեցին մեծ ծերերը
զլուխները ալեգարո,
- Թող շատ ապրի Ալան արքան
ոսկի գահին իր հաստատ,
Հազար տեսակ ցավի տուն է-
ն աշխարհը անցավոր,

Ու թվում է մարդու համար
ամեն մի ցավ անսովոր.
Բայց դու եղիր համբերատար,
միտքդ պահիր [միշտ] երկար,
Ցավը պետք է մարդր քաջի, ոչ
թե անշունչ սար ու քար:
Ես աշխարհում ոչ առաջին, ոչ
վերջինն եմ դու մեռակ.
Պատահել են էսպես դեպքեր
կյանքում ամեն ժամանակ.
Սենք չենք տեսել, բայց լսել
ենք, որ մեզանից շատ առաջ
Գորտ ու գազան մարդ են
դառել, մարդը դառել գայլ կամ
արջ.

Բայց թե հե՛ր է էս պատիժը
այժմ գալի քեզ վրա,
Անգետ ու [մութ] մարդիկ ենք
մենք- եղ ղրկողը կիմանա:
Սենք է՛ն գիտենք, որ նա, ով որ
ցավ է տվել ու աղետ.
Ստեղծել է ամեն ցավի ճարն ու
[ճամփեմ] իրեն հետ:
Չըկա մի ցավ արևի տակ, չըկա
մի < . . . >
Որ չունենա գիտությունը նրան
մի դեղ կամ դարման.
Գիտությունը լույս է, արքա,
աշխարհ իջած երկնքից,

Ճարեր ունի քաղած-քանած
ամեն հանքից ու տունկից.
Ետ է բերում նա մեռելին
հոգեվարքից իր վերջին,
Սի հոգին է միայն պակասում-
հավասարի արարչին:
Սի բան չըկա վեր երկնքում,
երկրի վրա ու տակին,
Ողջ զընդնել, ողջ մաղել է-
խաղալիք են իր ձեռքին:
Կանչիր թող գան քո
տերության մեծերն ուսյալ ու
գիտուն,
Եվ քո մարդկանց և քո այգուն
նրանք կանեն օգնություն...

«ՀԱՉԱՐԱՆ ԲԼՔՈՒԼ» ԵՎ ՈՍԿԵՂԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐ. ՀԻՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՆՈՐ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հեքիաթագիտական 14-րդ միջազգային գիտաժողով)

Տարագահ-տարալեզու գրականության
մեծ աշխարհի մենք մտնում ենք
Թունանյանով, և այդ աշխարհը այլևս մեր
հայրենի եզերքն է:
Առանց Թունանյանի՝ այդ եզերքը մերը չէ,
այլև մենք այդ աշխարհի առջև կանգնած
ենք աղքատ ազգականի մեր խեղճ ու
ցածր թշնամանքով...
Թունանյանով մենք կանք: Առանց
Թունանյանի՝ մենք չկանք:
Հրատմարտում

կանության միջև տարածքը նեղանում է, ու
հեքիաթը դառնում է այն ստատիկ արժեքը,
որը կարող է նպաստել այդ դեֆիցիտի վե-
րացմանը: Էքզիստենցիալ ընկալումը միայն
մեկ մշակույթով չի լինում, և ինչպես Բախ-
տինն է ասում, մեր որոշակիությունը գալիս-
հասվում է այնտեղ, որտեղ հատվում են
այլ մշակույթների որոշակիությունները:
Մշակութային տար-
բեր ընկալումները մի
տեղ կենտրոնացնե-
լով՝ ավելի հստակ
կընդգծվեն մեր «Հա-
զարան բլբուլ»-ի ու-
ղիմները, -ասաց Լ.
Ղարախանյանը:

Ողջույնի խոսքով
հանդես եկավ նաև
Ալվարո Ջիվանյանը, որին Լ. Ղարախանյա-
նը մտերմորեն «հեքիաթ կին» է անվանում:
Ալվարո Ջիվանյանի բնորոշմամբ՝ «Հազա-
րան բլբուլ»-ը հեքիաթաց հեքիաթն է:
Գիտաժողովին մասնակցում էր դաշնա-
կահար և կոմպոզիտոր **Տիգրան Համասյա-
նը**, որն իր ողջույնի խոսքում ներկայացրեց
«Հազարան բլբուլ» հեքիաթի հետ իր առն-
չությունը. «2019թ. պատահաբար կարողացի
«Հազարան բլբուլ»-ի մի տարբերակ, որը
շատ ոգեշնչեց ինձ: Մինչ այդ լսել էի, բայց

չա՜նք առաջացրին ինձ մոտ: Ու սկսվեց
տքնաջան աշխատանք: Փորձում էի այդ
պատմությունը ներկայացնել իմ ներաշ-
խարհով և իմ երաժշտական բառապաշա-
րով: Չորս տարվա ընթացքում ստեղծեցի
այդ գործը, որ կազմված է 90 րոպեանոց
երաժշտությու-
նից: Այն տար-
բեր երաժշտա-
կան ժանրերի
մի համաձուլ-
վածք է: Հիմ-
նականում ջազ
ժանրի մեջ է:
Այդ երաժշտու-
թյունը փոխեց
իմ կյանքը: Հա-
մոզված եմ՝
կփոխի նաև
չառերի կյան-
քը»:

Քանի որ այն համոզման է, որ «Նյու-
թանյանի աշխարհում, որտեղ մենք ապրում
ենք, հոգեւոր ասպեկտն անհրաժեշտ է:
Խոսքը հոգեւոր ճանփորդության մասին
է, հոգեւոր զարթոնքի մեծ ճանապարհոր-
դության մասին է: Հեքիաթն ասես հոգեւոր
ճանփորդության հրավեր է: Իսկ դա, կար-
ծում եմ, պատմության ցանկացած ժամա-
նակաշրջանում միշտ էլ եղել է անհրաժեշ-
տություն, հատկապես՝ հիմա: Մենք ապրում
ենք աշխարհում, որտեղ գերակշռում է նյու-

ցանց եղանակով: Նրա «Պատահական հե-
քիաթասացը. Հաննա Դիյաբ. Փորձառու-
թյուն և ավանդույթ» գեկուցումը սիրիացի
երիտասարդ ճոթավաճառ Հաննա Դիյաբի
մասին էր, որը ֆրանսիացի հնագետ Պոլ
Լյուկայի հետ ծանոթանալով 1707թ. Հալե-
պի գյուղերից մեկում, միասին ճանապար-
հորդել են՝ ծովային և ցամաքային շատ
փորձությունների ենթարկվելով: Հնագետը
կարևոր հայտնագործություններ է կատա-
րել՝ դրա համար Փարիզում արժանանալով
բարձր պարգևների: Հաննա Դիյաբի ներդ-
րումն ավելի մեծ էր. նա պատմել է մի հեքի-
աթ, որն ավելի ուշ հայտնի դարձավ «Ալա-
դինը և նրա կախարհական լամպը» անու-
նով: Դրանից բացի, Դիյաբը արևելագետ
Անտուան Գալանին շուրջ 16 պատմություն
է պատմել, որոնցից շատերը «1000 ու մեկ
գիշեր» ժողովածուի առանցքային հեքիաթ-
ները դարձան: Արդյո՞ք այդ պատմությու-
նները քաղված էին մեթոփորաբանական բա-
նասիրությունից, իսկ Հաննան հանդես էր
գալիս որպես փոխանցող օղակ, թե՛ նա հո-
րինել և վերահիմաստավորել էր դրանք՝ ել-
նելով իր հարուստ դրամատիկ փորձառու-
թյունից: Զբաղեցրեց, օգտվելով որոշակի
առաջնային աղբյուրներից և Հաննայի
պատմած հեքիաթների իր վերլուծությու-
նից, ցույց է տալիս, թե ինչպես են այդ հե-
քիաթները միջնորդ շատերը հանդես գա-
լիս փորձառության և ավանդույթի միջև: Ձե-
կուցողը, ինքն էլ ասես մի
հեքիաթասաց, պատկերա-
վոր վերլուծեց (նշենք, որ
ինչպես այս, այնպես էլ հա-
ջորդ անգլերեն գեկուցում-
ները թարգմանում էր գրա-
կանության իմաստիտուտի
գիտաշխատող Վարդուհի
Բալույանը), թե ինչպես են
այդ պատմությունները ազ-
դեցություն թողել տարբեր
հեղինակների վրա, ինչպի-
սին են Հաննա Քրիստիան
Անդերսենը, Չարլզ Դիքեն-
սը:



Նկատելի առնչություններ կան նաև հայ-
կական «Հազարան բլբուլ»-ի և «Երեք ոսկե
երեխաներ» շարքի հեքիաթների հետ:
Մաքսիմ Ֆոմինը՝ Հյուսիսային Իռլան-
դիայի Օլսթերի համալսարանից, առցանց
ներկայացրեց «ATU 550 և ATU 551 միջազ-
գային տիպերի հեքիաթները իռլանդական
բանասիրական ավադյություն» գեկուցու-
մը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ թանգա-
րանի տնօրեն **Լուսինե Ղարախանյանը**, որը
սիրով ներկայացրեց գիտաժողովի հիմնա-
կան գեկուցողներին և ընդգծեց այն հանգա-
մանքը, որ թե փորձենք պարզել, թե այդ
ո՞ր հեքիաթն է, որ շատ դիպուկ արտացո-
լում է աշխարհի սոցիո-մշակութային ընկա-
լումը ու աշխարհի սոցիո-մշակութային
վարքագիծը, ապա ինքը կառնածնացներ
հատկապես Թունանյանի «Հազարան
բլբուլ» անավարտ պոեմը: Այն ունի էքզիս-
տենցիալ ուղեբոլոր՝ ուղղված աշխարհին,
տարածաշրջանին և մեզանից յուրաքանչ-
յուրին: «Այսօր մարդը վերածվել է մեզահա-
մակարգի, ու թվում է, թե տեխնոլոգիաները
հարմարավետ ու ներդաշնակ միջավայր են
ստեղծում մեզ համար, բայց գնալով խորա-
նում է էքզիստենցիալ դեֆիցիտը, մշակույ-
թի և անդեմության, մշակույթի և կրավորա-

տելայակ չէի՝ ինչի մասին է: Հետո Արթուր
Շահնազարյանի գրքում ևս մի տարբերակ
կարդացի, որն էլ ոգևորեց ինձ: Ինձ մոտ
ստեղծագործական պրոցես սկսվեց ու սկ-
սեցի ավելի լավ ուսումնասիրել նյութը:
Հայկ Կիրակոսյանից էլ Սերիլնեի տարբերա-
կը ստացա: Դրան ավելացան նաև Թունան-
յանի, Ստ. Ջորյանի, Ղ. Աղայանի տարբե-
րակները, որոնք ստեղծագործական ներշն-

թապաշտության գաղափարը»: Նա հավե-
լեց, որ այժմ համագործակցում է հոլանդա-
ցի մի ռեժիսորի հետ, և առաջիկայում մեծ
ծրագրեր ունեն. «Ամբողջ 2025 թվականը
կլինի «Հազարան բլբուլ»-ի տարի»:
Այնուհետև խոսքը տրվեց գեկուցողնե-
րին.
Բրիտանացի ճանապարհորդ-գրող, **Նի-
քոլաս Ջաբերը** գիտաժողովին միացավ առ-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԱՐՃԱՆՅԱՆ ԳՐԷԻ ՀԱՐԱՐՁ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 26-ին Երևանի «Բուկի-Ռիստ» ընկերության Ամիրյան-2 հաս-

գործելի պատերազմական ու համեմատա-

ներին առաջարկվել էր գեղարվեստական և արցախյան թեմաներով, անկախ տպագրու-

Ամեն դեպքում կազմակերպիչներին հա-



26.10.2024 13:21

Սեփ. լրատվություն

«ՀԱՋԱՐԱՆ ԲԼՈՒՄ» ԵՎ ՈՍԿԵՂԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐ. ՀԻՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՆՈՐ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Բ.գ.դ. Թամար Հայ-րապետյանի (ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրու-

թյուններ: Սերինեին 1970-ական թվականներին ազգագրագետ

իրական հերոսն է վերադառնում տուն:

Արմինե Դանիելյանի (Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան)

գեկուցման մեջ արծարծվում է հրաշագործ ջրի ազդեցությունը

վար ներկայացրեց «Իմաստուն կանայք (ATU 707)»

Նշեց, որ Սերինեի պոեմում ինքնակենսագրական տարրեր կան:

Կենդանության օրոք տպագրված միակ գործը «Հագարան բլբուլ»-ի հետ:

Մյն շատ աղերսներ ունի թունամյանի «Հագարան բլբուլ»-ի հետ:

Բանախոսը, վերլուծելով հեքիաթը, գուգահեռներ անցկացրեց նրա և մեր իրականության հետ.

Թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյան

Հիշում է, թե ինչպես իր ազգական կանանցից մեկը՝ Մուրադի մարեն, հանկարծակի հարցմունք է իրեն:

Այն շատ աղերսներ ունի թունամյանի «Հագարան բլբուլ»-ի հետ:

Պարզվում է, որ հենց սկզբում վերացել է 500 տեսակ թռչուն նորածնության թեթև ծեռով:

Մարինե Խենյանի (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

Նրանում առկա է նաև սոցիալական մոտիվը, որով պատումը հոգեկերտվածքային երանգ է ստանում:

Ռջ միայն հորով, մորով էր որբացել, այլև հայրենիքի կորստով: Հենց այդ պատճառով էլ նա սկսեց փնտրել իր «Հագարան բլբուլ»-ը, որը պետք է փրկեր իրեն այդ մղձավանջից:

Վարդուհի Բալոյանը (ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ)

Պարզվում է, որ հենց սկզբում վերացել է 500 տեսակ թռչուն նորածնության թեթև ծեռով:

«Անդարծ-Անհաս կրթամշակութային հիմնադրամի հիմնադիր, հեքիաթասաց Հայկ Կիրակոսյանի «Հագարան բլբուլ»՝ ըստ Սերինեի»

Ավարդ Ջիվանյանի «Հագարան բլբուլ»-ի մի քանի թարգմանությունների և թարգմանիչների շուրջ»

Չեռքն ընկած գրքերի ընթերցանությամբ ընդլայնում է մտահորիզոնը՝ բացահայտելով ստեղծագործելու անթաքույց կարողու-

Էլենե Գոգիաշվիլի, Նինո Ժվանիայի (Իվանե Ջավախիշվիլի անվան թիվ 1 լիցեյի պետական սարան, Թբիլիսիի պետական կոնսերվատորիա)

Լուսինե Թովմասյան (Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան)

Մարինե Կիլասունյան հեռա-



Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

«ՄՈՆՔԵ-ԱՎՈՒ»-Ն՝ ՄԻՇՏ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ

Հայրենամակեր գործունեություն

Ճարտարգի ռուսաստանաբնակ գործարար Աշոտ Ջիվանյանը շուրջ երկու տասնամյակ առաջ հիմնադրեց «Մոնքե-Ավո» բարեգործական ընկերությունը, որի գործունեության գլխավոր առաջնությունը կրթությունն է: Նպատակը մատակարարելն է կրթության որակի բարձրացման, երիտասարդներին համայնքում ամրապնդելու, նրանց կյանքը հետաքրքիր դարձնելու, ուսուցիչների գործունեության արժևորման, դպրոցի հզորացման խթանումն է՝ քաջ գիտակցելով, որ դպրոցները երկրի պաշտպանության հիմքն են:



պանական ամրությունների բնագծերն են, ինչպես ասել է մեծերից մեկը: Լեզենդար գորհարամանատար Մոնքե Մելքոնյանի ռազմական ղեկավարությամբ Մարտունին յուր ժամանակին դարձել էր Արցախի ամենապաշտպանված ու ամենամարտունակ շրջանը: Նրա անունով բարեգործական ընկերություն ստեղծելը ոչ միայն հպարտություն, այլև մեծ պատասխանատվություն ու պարտականություն է, նրա գործը շարունակելու առաքելություն: Գիտելիքն էլ մեծ ուժ է, որին տիրապետող ունակ է հաղթանակներ կռել տարբեր բնագավառներում:

Արցախի կրթական ոլորտում «Մոնքե-Ավո» բարեգործական ընկերության միջև արցախցիների բռնի տեղահանությունը իրականացրած ծրագրերի մասին պատկերասրահ կարելի է կազմել դրանցից մի քանիսի հապանակի թվարկումից: Առաջին զանգի առթիվ առաջինցիներին, Վերջին զանգի կապակցությամբ՝ շրջանավարտներին նվերների հանձնում, մասնագիտական տոնի կապակցությամբ ուսուցիչներին խրախուսում, այդ թվում՝ թոշակառու: Դպրոցականների առարկայական օլիմպիադաներում մրցանակային տեղեր գրաված աշակերտներին և նրանց ուսուցիչներին՝ դրամական պարգևատրում, նույնը՝ մարզամշակութային ոլորտներում հաղթանակներ նվաճածներին: Տոների կապակցությամբ միջոցառումները նույնպես բարերար Աշոտ Ջիվանյանի ուշադրության կենտրոնում էին: Իսկ բազմաթիվ էքսկուրսիաները, ճամբարները նպատակաուղղված էին հայրենաճանաչությանը, միայնակ հետ ջերմ հարաբերությունների սերտացմանը և այլն:

Ճարտարուն գործում էր չորս

դպրոց: Չորրորդը, ինչպես ճարտարցիներն են ասում՝ Յերիշենի դպրոցը, վերագործարկվել, իսկ հարևան Քերթի դպրոցը վերակառուցվել է բարերար Ա. Ջիվանյանի միջոցներով: 2020թ. պատերազմից հետո ճարտարուն «Մոնքե-Ավո»-ի ծրագրերից մեկն էլ երիտասարդ ուսուցիչների խորհուրդ ստեղծելն էր, որի նպատակը համայնքի դպրոցների երիտասարդ մանկավարժների ներուժը միավորելն է, նրանց կարողությունների բացահայտմանն ու իրացմանը նպաստելը, գաղափարները կյանքի կոչելուն, ծառայած խնդիրների լուծմանն աջակցելը:

«Մոնքե-Ավո»-ն հայրենակիցների կողքին է նաև բռնագաղթից հետո: Մեր ժողովրդի համար ստեղծված այս ծանր պայմաններում ման յուրաքանչյուր քայլ բարոյական մեծ խթան է բռնատեղահանվածների կյանքը ինչ-որ չափով թեթևացնելու, չկորսվելու, ապագայի նկատմամբ հույսը չկորցնելու գործում: Գլխավոր խնդիրը հայրենակիցներին համահավաք, մեր քաղցրաբառ բարբառը, արցախյան ավանդույթները, սովորույթները կենդանի պահելն է: Ներկա պայմաններում, երբ արցախցիները ցրված են տարբեր տեղերում, դժվար է ֆիզիկապես համահավաքություն պահել: Բայց «Մոնքե-Ավո»-ն հնարավորինս դա կազմակերպում է: Ահա նրա ֆեյսբուքյան էջում արձագանքներից երկուսը:

«Մոնքե-Ավո» բարեգործական ընկերության հերթական հայրենաճանաչողական էքսկուրսիան ուխտագնացություն էր դեպի Տառեռի պուրակ ու Օշականի Սուրբ Մաշտոց եկեղեցի: Ուխտավորներն այս անգամ ճարտարի դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտներն էին, նրանց դասուցիները, ընկերության անդամներ ու ծնողներ:

Աշակերտները հանդես եկան ելույթներով եւ իրենց սրտի խոսքն ուղղեցին բոլոր ժամանակների մեծագույն հանճարին՝ երանելի Մաշտոցին ու մեզ մտովի տեղափոխեցին հեռվում անտեր մնացած մեր լուսավոր կրթօջախները, ուր մեզ վերապահված էր ուսուցիչ լինելու առաքելությունը:

Հավաքվել էին վեց տասնյակից ավելի արցախցիներ, որոնք իրենց հոգիներում կրում են Արցախը՝ լուսավոր ու թանկ, բայց աննկարագրելի ցավոտ հիշողությունների տեսքով: Օրն ունեցավ մեծ խորհուրդ ու իմաստ եւ դեռ չբաժանված՝ զգացինք, որ կարոտում ենք իրար:

Կամ՝ «Հանդիպման վայրը նույնն է՝ քաղաքամայր Երևան, Հանրապետության հրապարակ:

Այստեղ՝ մայրաքաղաքի սրտում, «Մոնքե-Ավո» բարեգործական ընկերության շրջանակում ներառված ճարտարի ու Քերթի դպրոցականներն ու ուսուցիչներն ունեն մի փոքր անկյուն, ուր ժամանակ առ ժամանակ հավաքվում են իրար կարոտած աշակերտներ, ուսուցիչներ և Հայաստանի մարզերից իրենց երեխաներին երևան բերած հասցրած ծնողներ, ու, համաձայն ծրագրի, ճամփորդում որոշված ուղղությամբ: Հերթական էքսկուրսիան կազմակերպվեց 7-8-րդ դասարանների աշակերտների ու

նրանց դասուցիների հետ: Երախտապարտ ենք, պարոն Ջիվանյան, որ միշտ մեր կողքին եք ու Դիշա սարի նման մեր թիկունքում կանգնած»:

«Մոնքե-Ավո»-ն Մայր Հայաստանում շարունակեց ամառային ճամբարի կազմակերպումը: Ավելին, այս տարի արցախցի աշակերտների հետ «Հասնիկ» ճամբարում հանգստացան նաև Արարատի մարզի Հովտաշատ համայնքի դպրոցի աշակերտներ: Այդ դպրոցի աշակերտները արցախցիների հետ մասնակցեցին նաև «Մոնքե-Ավո»-ի կազմակերպած ճանաչողական էքսկուրսիային: Ասել է թե՛ ծրագրերից մեկն էլ հայաստանցի-արցախցի երեխաների՝ իրար լավ ճանաչելու, բարեկամանալու ուղղությամբ է: Չէ՛ որ Արցախի պաշտպանության բանակում կողք կողքի ծառայում, իսկ պատերազմի ժամանակ իրար թև-թիկունք էին, միայնակ համար կյանքերը չէին խնայում, արցախցիների հետ մեկ միասնական միավորում էին Հայաստանի բոլոր վայրերից եկած հայորդիները:

Ամառային միջոցառումներից ուշագրավ է «Մոնքե-Ավո»-ի կազմակերպած յոթօրյա էքսկուրսիան Սանկտ Պետերբուրգ, որին մաս-



նակցեցին օլիմպիադայում մրցանակային տեղեր գրաված աշակերտներն իրենց ուսուցիչների հետ: «Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում «Մոնքե-Ավո» բարեգործական ընկերությանը Արցախից դուրս և իր հովանավորության տակ գտնվող դպրոցների ուսուցիչներին ու աշակերտներին ապրումակցելու, գիտելիքի՝ որպես ամենահզոր զենքի արժևորումը օրակարգում պահելու համար: Պարոն Ջիվանյան, երախտապարտ ենք Ձեզ այն առաքելության համար, որ Դուք իրականացնում եք այս մղձավանջային օրերին սրտի թելադրանքով՝ ոչ որպես պարտականություն, այլ վաղուց արդեն որպես ապրելակերպ», -անկեղծ երախտագիտության այսպիսի խոսքեր շատերից կարելի է լսել:

ԳՐԱՐԱՆՔԻ ԵՎ ՆՈՐ ԹԱՓ Է ՍՆԱՆՈՒՄ
Ինչպես արդեն ասացինք, «Մոնքե-Ավո»-ի բոլոր ծրագրերն ուղղված են մեկ նպատակի՝ անկախ պայմաններին և իրավիճակից կրթությանը հարմարեցնել ժամանակի մարտահրավերներին դիմակայող, բազմակողմանի զարգացած, մրցունակ սերունդ: Այդպիսին դառնալու գլխավոր ճանապարհներից

մեկն էլ ընթերցանությունն է:

Աշակերտների մեջ գրքի նկատմամբ սեր արթնացնելու նպատակով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախկին նախարար Լուսինե Դարախանյանի նախաձեռնությամբ 2020թ. ներդրվեց «Արցախը կարդում է» ծրագիրը, որին հետագայում միացավ «Մոնքե - Ավո» բարեգործական ընկերությունը՝ ի դեմս նրա գործադիր տնօրեն, բարերար Աշոտ Ջիվանյանի: Գրքարշավը կանգ չառավ նաև Արցախի շրջափակման ժամանակ: Իսկ բռնագաղթից հետո այն՝ «Արցախցին կարդում է» վերտառությամբ, շարունակվեց բացառապես «Մոնքե-Ավո»-ի կողմից և նրա ղեկավարությամբ: Ծրագրի մասին հայտարարություն տրվեց անցած ուսումնական տարվա վերջերին. պարզապես ֆոնը գայթակղիչ էր. մրցանակային տեղեր զբաղեցնողները պարզապես չէին արժեքավոր գրքերով, լավերից լավագույնները՝ մեկ տարվա կտրվածքով 100 դուրս կրթաթրջակով և ճանապարհորդություն դեպի արտերկիր: Գրքարշավին կարող էին մասնակցել բոլոր արցախցի երեխաները՝ անկախ բնակության վայրից (ՌԴ, արտերկիր և այլն): Արցախի 10 դպրոցների (Ճարտարի հ. 1, 2, 3, Քերթի, Գիշու, Մարտունու, Հաղորտի, Մաղավուզի, Ստեփանակերտի հ. 10 և ֆիզմաթ դպրոցները) ու 2 մանկապարտեզների սաների արցախաշունչ ելույթները շուրջ ութսուն օր ոգևորեցին գրքարշավի հետևորդներին: 60 գրքարշավականներ հանդես եկան 480 ելույթներով (հետաքրքրվողները դրանց, ինչպես նաև մրցանակաբաշխության արարողությանը և մրցանակակիրների մասին կարող են հանգամանակից տեղեկանալ «Մոնքե-Ավո» բարեգործական ընկերության ֆեյսբուքյան էջից):

«K ЗАПАДУ ОТ РАЯ»
Հոկտեմբերի 5-ը տարվա ամենահիշարժան օրն էր «Մոնքե-Ավո»-ականների համար: Ուսուցիչ մասնագիտական օրը, որ նշվում էր առանձնակի շուրջով, այս անգամ նշանավորվեց առատ հունձքով: Խոսքը ոչ միայն գրքարշավի մասնակիցների մրցանակաբաշխության մասին է, այլև նոր ծնունդ առած «K ЗАПАДУ ОТ РАЯ» գրքի, որի հեղինակը ուսուցիչ է՝ անգլերենի ճանաչված մասնագետ Կարեն Մանասյանը: Նրա մասին դրվատանքի ջերմ խոսքեր ասվեցին որպես լավագույն մասնագետի, որի աշակերտները միշտ հաղթում են առարկայական օլիմպիադաներում: Բռնագաղթից հետո բացահայտվեց լավագույն ուսուցիչ նաև ստեղծագործական տաղանդը, ինչը աննկատ չմնաց բարերար Աշոտ Ջիվանյանի ուշադրությունից, և նա սիրով հանձն առավ գրքի տպագրությունը:

Շնորհանդեսին բոլոր ելույթ ունեցողները, արտահայտելով իրենց զգացողությունները գիրքն ընթերցելուց հետո, ինչպես նաև գրքի հեղինակը այն ցանկությունը հայտնեցին, որ հաջորդ միջոցառումները տեղի ունենան ոչ թե Դրախտից դեպի արևմուտք, ինչպես գրքի վերնագիրն է, այլ հենց դրախտում՝ մեր հայրենի Արցախում: Բարերար Աշոտ Ջիվանյանին հասցեագրված



գրքին հեղինակի մակագրությունը ավելի քան պերճախոս է:

«Մարդուն, որ ուրախություն է ստանում նրանից, որ ուրախություն է տալիս ուրիշին»:

Իսկ ինքը՝ բարերարը, ելույթ ունենալով, նախ և առաջ մեծարեց ուսուցիչներին. «Ես իմ կյանքի հաջողություններին հասել եմ շնորհիվ ձեր խրատների, ձեր ուսուցման, և անգնահատելի է ձեր դերը իմ կյանքում»: Ապա Կ. Մանասյանի գրքի կապակցությամբ ասաց. «Մենք միշտ պատրաստ ենք ոչ միայն քեզ համար, այլև բոլոր նրանց համար, ովքեր տաղանդավոր մարդիկ են, աջակցել»:

Չնայած մեծ զբաղվածությանը, բարերար Աշոտ Ջիվանյանը ժամանակ էր գտնում տարին մի քանի անգամ այցելել ծննդավայր, մասնակցել «Մոնքե-Ավո»-ի միջոցառումներին, ամառը հանձնել խրախուսական պարգևները: «Ես անգամ չգիտեմ՝ բարեգործություն անելով ես իրե՞նց համար եմ անում, թե՛ ինձ համար: Երկի երկուսը միասին: Բարեգործություն անելով իմ հայրենիքում՝ ստանում եմ հաճույք, և բարեգործական ծրագրերն այստեղ՝ Արցախում՝ կրթական ոլորտում շարունակվելու են», -ասել էր հերթական անգամ ծննդավայրում գտնվելու ժամանակ: Նույնն անում է բռնագաղթից հետո Մայր Հայաստանում ապաստանած հայրենակիցներին այցելելով:

«Երախտապարտ ենք, որ կանգնեցիք դժոխքի կրակների միջով անցած արցախցի դպրոցականի կողքին» մեկ տարվա մեջ բազմաթիվ անգամ պարզանելով ժպիտ, ուրախություն ու թոխքի համար թեր: Ձեր հայրենամակեր գործունեությունը բոլորիս մեջ ամառ է պահում Մեծ վերադարձի՝ օրեցօր մարող, բայց ապրեցնող հույսը:

«Լուսարար»-ը իր հերթին արևատուրություն է մարդուն բարերար Աշոտ Ջիվանյանին, որի հայրենասիրությունն արտահայտվում է գործով: Լեզենդար գորհարամանատար Մոնքե Մելքոնյանն ասում էր. «Իմ կենսացը մի՛ խմեք, իմ գործը շարունակեք»: Նրա գործի շարունակություն է նաև Աշոտ Ջիվանյանի գործունեությունը: Ցանկանաք, որ նրա արարքը վարակիչ լինի շատերի համար:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՉԱՄԻՑ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՆԵՐԻՆ

Անցած տարի Արցախից բռնաբերված մեր հայրենակիցներից շատերն ունեն նյութական աջակցության մեծ խնդիր: Այդ ասպարեզում ջանադիր առումով իր գործունեությունն է շարունակում դեռևս Քաջաթաղի վերաբնակեցման առաջին օրերից կազմավորված «Գուրգեն Մելիքյանի» Քաջաթաղի բազմազավակ ընտանիքներին հիմնադրամ»-ը (ԳԱՔԲԸ): Մինչև Արցախյան 44-օրյա պատերազմը, հիմնադրամը ծավալուն աջակցություն էր ցուցաբերում Քաջաթաղի շրջանում բնակվող բազմազավակ ընտանիքներին, ինչպես նաև՝ սոցիալապես անապահովներին: Հիմնադրամը տարիներ շարունակ, ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախի բուհերում սովորող բազում ուսանողների ուսման վարձն է հոգացել ամբողջական կամ մասնակի: Շատ է կարևորվել հիմնադրամի կողմից Բերձորի տարածքում պտղատու այգիների, պուրակների, ծառուղիների ստեղծումը, որոնք իրականացվում էին ԵՊՀ ուսանողների, դասախոսների, հենց իրենց՝ բերձորցիների մասնակցությամբ:

րում ու մայրաքաղաքում, թեև մինչ այդ էլ Արցախի այլ բնակավայրերի շատ բնակիչներ են նյութական աջակցություն ստացել հիմնադրամից:

Արդեն մեկ տարի և ավելի է՝

թյան խորհրդի նախագահ, հայ բանասիրության ֆակուլտետի նախկին ղեկավար Արծրուն Ավագյանը, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նախկին ղեկավար Մարատ Գրիգորյանը

ցուցիչ Հայկ Շահբազյանի ուղեկցությամբ այցելություն եղավ այդ ընտանիքներին: Նարեկն ունի 5 երեխա: Դպրոցականները հաճախում են Ձովաբերի միջնակարգ դպրոց: Նարեկի ծննդյան օրն էր բնական է՝ ստացավ շնորհավորանք ու իր կրկնակի նվերը: Ներսեսն ունի 8 երեխա: Եղբայրների ընտանիքները բնակվում են միասին:

Գ. Հյուսնունցի ընտանիքը 7 երեխաներով բնակվում է գյուղի մեկ այլ տան մեջ: Գոհ են զովաբերցիներից, որ իրենց ընդունել են հարազատի պես: Լուիզա Գագիկի Սկոյանի ընտանիքը 4 երեխաներով բնակվում է Վարսեր գյուղում վարձակալած առանձնատանը: Ընտանիքի հայրը գոհվել է Արցախյան պատերազմում: Լուիզան ունի առողջական ծանր խնդիրներ: Արտիկ Հովսեփյանի ընտանիքը բնակվում է Սևան քաղաքում՝ բազմաբնակարան շենքում: Տարածքում բնակվող բազմազավակ արցախցիներին հանդիպելու համար հիմնադրամի անդամներին օժանդակեց տիկին Ռուզաննա Նահապետյանը, որին Գ. Մելիքյանը շնորհակալություն հայտնեց: Հիմնադրամից օգնություն ստացած ընտանիքները հայտնեցին իրենց գոհունակությունը՝ ստացած աջակցության համար: Գ. Մելիքյանը հավաստիացրեց, որ աջակցությունը լինելու է շարունակական:



ԳԱՔԲԸ-ի գործադիր տնօրենը՝ հոգաբարձուների խորհրդի անդամների հետ, երբեմն նաև արտերկրից հիմնադրամին աջակցող կառույցների ներկայացուցիչները, այցելում են Երևանում և մարզերում բնակություն հաստատած արցախցի բազմազավակ ընտանիքներին, ցուցաբերում սննդի, հագուստեղենի և այլ նյութական աջակցություն: Հոկտեմբերի 12-ին կայացավ հերթական այցը Գեղարքունիքի մարզ: ԳԱՔԲԸ-ի գործադիր տնօրեն, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին ղեկավար Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների վարչու-

յանը և «Ապառաժ» լեռնագնացության ակումբի մարզիչ Սուրեն Սեֆանյանը հերթական այցով եղան Գեղարքունիքի մարզի Ձովաբեր, Վարսեր գյուղերում և Սևան քաղաքում: Շահառու 5 ընտանիքի հատկացվեց սնունդ և նոր հագուստ: 2023թ. սեպտեմբերի վերջերից Ձովաբեր գյուղում են ապաստանել Արցախի Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղից եղբայրներ Նարեկ և Ներսես Հակոբյանների և Մարտակերտ քաղաքից Գեմադի Հյուսնունցի ընտանիքները: Ձովաբեր գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի ներկայա-

ԱՐԴԵՆ 31 ԱՆԳԱՄ

Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործող «Հուստ տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամում հոկտեմբերի 25-ին տոնակա եռօրյա էր: 1994 թվականից սկսած՝ յուրաքանչյուր տարի այս բարեգործական կառույցը հոկտեմբերի վերջից մինչև մայիս իրագործում է «Գթության խոհանոց» ծրագիրը: Ծրագրի շահառուներն են Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Կենտրոն, Էրեբունի և Նորք-Մարաշ վարչական շրջանների միասնակ թոշակառուները, հաշմանդամություն ունեցող անձինք, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները և սոցիալապես անապահով անձինք, որոնք նշված ժամանակահատվածում օրական մեկ անգամ ստանում են տաք, որակյալ սնունդ, ինչպես նաև սննդի փաթեթներ՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան կապակցությամբ: 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և մինչ օրս «Հուստ տուն»-ը նախաձեռնել է նաև Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին օգնել թե՛ նյութապես և թե՛ հոգեպես: 2023թ. սեպտեմբերին «Հուստ տուն»-ը «Սոցիալական շտապօգնություն» ծրագրով դաշտային խոհանոցով Գորիսում էր, և կենտրոնի աշխատակիցները կամավորների հետ օրեր շարունակ սննդով ապահովում էին բռնի տեղահանված արցախցիներին: 31-րդ սեզոնի բացմանը, բացի «Գթության խոհանոց»-ի շահառուներից, ներկա էին ծրագրի աջակիցներ, հյուրեր, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ Հ. Տիգրանյանը, Սիյուռքի գլխավոր հանձնակատար Զ. Սիմոնյանը, ներկայացուցիչներ Ալիսատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, Միասնական սոցիալական ծառայությունից, Գերմանիայի դեսպանատնից, այլոց: Ներկաներին ողջունեց ու «Գթության խոհանոց»-ի բացումը հայտարարեց «Հուստ տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Սովսես Պողոսյանը: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր բարերարներին՝ մնացական ընտանիքին՝ Վաղարշապատից, Ռազարյաններին՝ Քարակերտից, Հայրապետյաններին՝ Ջրառատից, Բաղդասարյան եղբայրներին՝ Սիյուռքից և այլոց, որոնք տարիներ շարունակ աջակցել են իր ղեկավարած կառույցին: Ընթերցվեց նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Կլաուդիա Բուշի ուղերձը:

Կառույցի գործունեությունը բարձր գնահատեցին և, նաև որպես պետության աջակից, կարևորեցին Հ. Տիգրանյանը, Զ. Սիմոնյանը, «Հուստ տուն» բարեգործական կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Լ. Ազատյանը:

«Հուստ տուն» կենտրոնի «Հույսով լի և առողջ մանկություն» ծրագրի շահառու երեխաները, որոնք հիմնականում արցախցիներ են, երգով, ասմունքով ողջունեցին ներկաներին: Նրանք ներկայացրել էին նաև կենտրոնի հարկի տակ նկարած իրենց ծնողի աշխատանքները՝ հիմնականում Արցախի մասին պատմող մանկական նկարներ:

Տոնակա ճաշը «Հուստ տուն» կենտրոնի հիմնական խոհարարների հետ պատրաստել էին նույն կառույցի ծրագրերի շրջանակում որպես խոհարարի օգնական որակավորված և վերապատրաստված Արցախից բռնի տեղահանված կանայք: Ներկաներին ազգագրական երգերով ոգևորեց նաև մշակութային գործիչ, «Սասուն» ազգագրական երգի-պարի համույթի ղեկավար «Գաթա Բենդ» խմբի համահիմնադիր Անդրանիկ սարկավազ Մանուկյանը, որը «Հուստ տուն» կենտրոնի բարեկամներից է: Միջոցառման վերջում եղավ նաև ծառատունկ:

Զոհրաբ ԸՈՒՔՆՍԱԼ

ՄԻՇՏ ԸՆԴՊԻՆԵԼԻ «ԿԱՆՉ» ԵՎ «ԴԵՊԻ ԼՈՒՅՍ» ԵՐԳՉԱԽԱՐԵՐԸ

«Եվ սեղմենք մի կոճակ եվ մարդկանց հոգում Ծաղիկների պես լույսերը ծաղկեն: Եվ սովերները Դառնան ցայտաղբյուր ճառագայթների... Ու եթե լինի, Դենց այդպես լինի, Իզուր չենք գոչի «Եղիցի» լույս», Այլ կշռեցանք արդեն «Եվ եղև»:

ելույթներին ու հուզվել. մեծ նվիրումով են հանդես գալիս մեր երեխաները:

Հոկտեմբերի 9-ին Երևանում գործող «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոնում կայացավ «Սուրբ մայր հայրենիք՝ հերոս հաղթական» խորագիրը կրող համերգային ցերեկույթը՝ նվիրված Արցախյան բոլոր պատերազմներում անմահացած հերոսների հիշատակին: Այդ օրը «Ձատիկ»-ի տարածքում կատարվեց «Նաղաղության աղավնու» խորհրդանիշը կրող պուրակի բացումը: Միջոցառմանը փայլուն ելույթով հանդես եկավ նաև «Դեպի լույս» երգչախումբը՝ ինչպես միշտ արժանանալով հանդիսատեսի ծափողջույններին ու սիրուն: Խմբի ղեկավարական ղեկավար Վ. Խաչատրյանը զրույցի ընթացքում ասաց. «Ամբաստանելի ու հուզիչ պահեր ապրեցի, երբ միջոցառման ավարտին «Ձատիկ»-ի երեխաների երգչախումբը՝ գեղարվեստական ղեկավար Շաքե Սարգսյանի գլխավորությամբ, կատարեց իմ հեղինակած «Հայ զինվոր» երգը»: Մինչ այդ՝ սեպտեմբերի 29-ին, «Կանչ» ու «Դեպի լույս» երգչախումբերը՝ Վ. Խաչատրյանի ղեկավարությամբ, հանդես եկան Լուսակերտի գործառնում: Այստեղ այդ օրը նշվում էր Արցախյան 44-օրյա պատերազմի նվիրված միջոցառում, որը կրում էր «Շնորհակալ ենք քեզ, Հայ Ձինվոր» խորագիրը: «Կանչ» ու «Դեպի լույս» երգչախումբերը ջերմ ընդունելության արժանացան գործառնի անձնակազմի և հյուրերի կողմից:



«Միջոցառման ընթացքում մտքով տեղափոխվեցինք այն երանելի օրերը, երբ մեր երեխաները համերգով հանդես էին գալիս Արցախի գործառնում», -ասաց Վ. Խաչատրյանը:

Մանկապատանեկան երգչախմբերի կատարումներին միանում էին նաև Լուսակերտի գործառնի զինվորները, և համերգով առավել հուզիչ ու ընդունելի էր դառնում: Լուսակերտում նույնպես «Կանչ» ու «Դեպի լույս» երգչախմբերին զինվորները հրաժեշտ տվեցին իրենց կատարումներով՝ մեծ բավանակություն պարգևելով նրանց: Վ. Խաչատրյանն ասաց՝ վերջին այս համերգները միշտ է հիշելու:

Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հասուկ դպրոցում են գործում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոնի (ԳԴՄՄԿ) «Կանչ» ու «Դեպի լույս» երգչախմբերը: Արդեն երկար տարիներ է՝ երգչուհի-երգահան Վարդուհի Խաչատրյանը ղեկավարում է տվյալ երգչախմբերը, որոնք նրա գլխավորությամբ հանդես են եկել ՀՀ տարբեր մարզերում, Երևանում, Արցախում՝ համերգային դահլիճներում, գործառնում: Մանկապատանեկան կենտրոնի սաները նաև հանդես են եկել արտերկրում: Արհեստավարժ ու լավ կատարումների համար «Կանչ»-ը ու «Դեպի լույս»-ը բազում մրցանակների են արժանացել, դարձել միջազգային ու հանրապետական մրցույթների դափնեկիրներ: Առիթ ունեցել են մի քանի անգամ ներկա լինել այս երգչախմբերի

ՎՈՉՈՒՄՎ՝ ՄԱՆԱԳԵՏ

ՆԱԽԿԻՆ ՄՊԱ ԶԻ ԼԻՆՈՒՄ



Մանկությունը Տեղահանում եւ պատերազմ

Ս.Գ.-ն ծնվել է 1984թ. հունվարի 20-ին Խորհրդային Ադրբեջանի Բաքու քաղաքում: 4 տարեկանում ականատես է լինում Բաքվում կազմակերպված հայերի ջարդերին եւ ստիպված լինում պապուտատի, ծնողների ու ավագ եղբոր հետ լքել Բաքուն՝ մագապուրծ փրկվելով մասսայական կոտորածից: Նոր բնակության վայր ընտրելու մի քանի տարբերակներ կային, սակայն պապիկի հորդորով նրանք նախընտրում են ապրել Արցախում, քանի որ ինչպես պապիկն էր ասում՝ իրենց հողից ոչ ոք չի կարող նրանց վռնել: Շուրջ չորս տասնամյակ առաջ պատկերացնել անզամ չէր լինում, թե երբեք Արցախը կհայաթափվի: Փոքրիկ տղա Ս.Գ.-ի համար էլ դեռ անպատկերացելի էր, որ հետագայում զինվորական պիտի դառնար, անցնել սարսափելի պատերազմների արհավիրքներով, ծանր վիրավորվելու ցավով ու մղձավանջներով, ապրել մտերիմներ կորցնելու անտանելի վիճակում...

1988-ին Բաքվից Արցախ տեղափոխվելուց հետո Ս. Գ.-ն այդպես էլ խաղաղ ու ապահով մանկություն չունեցավ: Հասունացել էր Արցախյան շարժումը, որին հաջորդեց Արցախյան առաջին պատերազմը: Հայրն առաջիններից մեկն էր, որ կամավորագրվեց Արցախի ինքնապաշտպանական ջոկատների շարքերում: Ձինադադարից հետո էլ շարունակեց զինվորական ծառայությունը ՊԲ-ում ու մինչև թոշակի անցնելը նվիրված մնաց իր գործին՝ հասնելով մինչև դիվիզիոնի հրամանատարի պաշտոնին: Քսանամյա բեռին արհաբար զոհվեց Արցախյան առաջին պատերազմում ինքնապաշտպանական մարտերի ժամանակ:

Պատանակությունը

Ընթերցանությունը՝ ինքնագրագրաման եւ մասնագիտության ընտրության հիմք: Ս.Գ.-ն հաճախել է Ստեփանակերտի Սախարովի անվան հ.8 դպրոցը: Ինչպես ինքն է ասում՝ սկզբնական շրջանում դպրոցում այդքան էլ լավ չէր սովորում: Բայց ընթերցանության համոզիչ սիրտ շնորհիվ դա փոխվեց: Տասը տարեկան էր, երբ ամառային արծակուրդների ժամանակ մայրը տվեց նրան ժոզեֆ Ռոնիի «Կրակի համար պայքարը» գրքի ռուսերեն տարբերակը: Գոյության պայքարի թեմայով հետաքրքրվող Ս.-ին դուր եկավ գիրքն ու ընթերցանությունը, ինչն էլ վճռորոշ հիմք դարձավ հետագայում ավելի լուրջ գրքեր կարդալով՝ ինքնագրագրաման ուրույն փուլ անցնել, բարձրացնել առաջադիմությունը, դպրոցական կոլեկտիվում ու շրջապատում աչքի ընկնել խելացի դատողությամբ, ընկղմվել հայոց պատմության մեջ եւ ընտրել պատմաբանի մասնագիտությունը: Դեռահասության տարիքում կարդացել էր գրեթե բոլոր հայ պատմավեպերը, տպավորվել՝ «Վարդանանք», «Սամվել», «Գեորգ

Մարգարեանի», «Մխիթար Սպարապետ» վեպերի հերոսների կերպարներով: Ընտանիքում ունենալով զինվորական հոր ու նահատակված քեռու վառ օրինակներ, պատմությունից քաղելով անհրաժեշտը՝ որոշում է դառնալ զինվորական սպա՝ ոչ թե հերոսանալու համար, այլ ազգի համար անելու այն, ինչ խիղճն է թելադրում: Ասում է, որ չպետք է հերոսացնել մարդկանց. պարզապես անհրաժեշտ պահին նրանք արել են այն, ինչ որ պետք է անելին:

«Կռո»

2002-2004թթ. ծառայում է ՊԲ զինված ուժերի շարքերում՝ անցնելով պարտադիր զինվորական ծառայությունը: Ընդունվում է «Մետրոպ Մաշտոց» համալսարանի պատմության բաժինը: Ուսմանը զուգահեռ շուրջ երկու տարի ծառայում է ՓԾ-ում՝ որպես փրկարար: Փրկարարական ծառայության ընթացքում ականատես լինելով ողբերգական դեպքերի ու դժբախտ պատահարների, էլ ավելի թրժելով փրկարարական ոգին, հասկանում է, որ մահից չպետք է վախենալ, այլ պետք է ուղիղ նայել մահվան աչքերին, անհրաժեշտության դեպքում՝ թեկուզ ինքնազոհությամբ, բայց բարձր մակարդակով կատարել թո գործը: Փրկելու ծիրը տեղափոխում է զինվորական ծառայության ոլորտ՝ 2008-ին մտնելով ծառայության ԱՀ ՊԲ-ում: Բնավորությամբ ճշտապահ, խառնվածքով՝ տաքարյուն Ս. Գ.-ն հաճախ էր վիճաբանություն ունենում վերահասների հետ, ինչի արդյունքում հաճախ էլ տեղափոխվում էր մեկ զորամասից մյուսը: Արցախյան բարբառում օգտագործվող «կռո» ածականը, որով հիմնականում բնութագրում են պինդ, չկոտրվող պոպոքը, իզուր չէ վերագրված Ս. Գ.-ին՝ որպես մակամուն: Կռոյին չեն կոտրել ոչ միջամենային լարված հարաբերությունները վերադասների հետ, ոչ պատերազմները, ոչ ծանր վիրավորվելը, ոչ էլ ընտանեկան կյանքում ունեցած հիասթափությունն ու ամուսնալուծությունները:

Քառորյա պատերազմ

«Ծառայության մտնելուց առաջ էլ, ընթացքում էլ գիտեի, որ ես պիտի մասնակցեմ պատերազմի, ինչ-որ ներքին կանխագրացում ունեի: Երբ սկսվեց Ապրիլյանը, ես կատարում էի այն, ինչ պետք է կատարեի: Վստահություն կար մտա, որ հետո բան չի պատահի: Այդպես էլ եղավ: Բայց ես գիտեի, որ այդպիսով պատերազմը դեռ չի ավարտվել: Քառորյա պատերազմը համարում եմ, այսպես ասած, հետախուզություն, որն քաղաքական դաշտի ազդեցությամբ իրականացվել է ստուգելու համար, թե ինչ է անում աշխարհը»:

44-օրյա պատերազմ

2020 թ. սեպտեմբերի 27-ին պետք է մասնակցեր քրոջ՝ հորաքրոջ աղջկա հարսանիքի արարողությանը: Հայտնի պատճառով հարսանիքը չեղարկվեց:

Ավագ լեյտենանտ Ս.Գ.-ն մարտական գործողությունների ժամանակահատվածում զբաղեցրել է N զորամասի հակատանկային ստորաբաժանման հրամանատարի պաշտոնը: Սեպտեմբերի 27-ին դուրս է եկել մարտական գոտի: Վարելով ծանր մարտեր՝ հմուտ ղեկավարել է ստորաբաժանումը եւ նրա կրակը: Խիզախաբար մարտնչել է եւ որպես հրաձգային, եւ որպես հակատանկային ստորաբաժանման հրամանատար: Իր կողմից մշտապես հետախուզություն վարելու, իրավիճակին տիրապետելու եւ ստորաբաժանումն անընդհատ ղեկավարելու արդյունքում հակատանկային ստորաբաժանումը հայտնաբերել է խոցել է 15 տանկ, 8 ՀՄՍ, 1 «Կամազ», 2 «ՈւԱՋ», 1 «Փիքափ», 1 մարտական տրակտոր: Շրջափակման մեջ հայտնվելու սպառնալիքի ժամանակ իրեն չի կորցրել, խուճապի չի մատնվել եւ ղեկավարելով իրեն վստահված ստորաբաժանումը՝ դուրս բերել

ամվտանգ տեղամաս: Ծանր վիրավորվել է հոկտեմբերի 13-ին արկի պայթյունից:

Պատերազմի առաջին իսկ օրվանից գիտակցել է մշտապես եղել է անձնակազմի մոտ՝ միասին կիսելով պատերազմի արհավիրքները: Հմուտ ղեկավարել է ստորաբաժանումը եւ նրա կրակը: Գիշեր-ցերեկ առանց հանգստի հետախուզություն վարելով, ժամանակին նշանացուցում տալով եւ նշանակետերի խոցումով՝ ապահովել է մարտական խնդրի կատարման բարձր արդյունավետությունը:

«Չեզ հետ հաճելի էր ծառայել, կպատահե՞նք երկնքում»:

«Պատերազմի ժամանակ մեզ համար տարբեր պարագաներով համարված «տուլիկներ» էին ուղարկվում: Առաջին փաթեթում Կարմիր «Մալբորո» կար, դրեցի գրպանում՝ ցույց տալով գործին եւ խոստանալով, որ պատերազմը հաղթենք՝ բոլորով հաղթանակած «Մալբորո» ենք ծխելու:

Հոկտեմբերի 13-ին հերթական պատերազմական օրն էր. թշնամին հերթական անգամ հարձակվեց մեր դիրքերի վրա: Օգտագործում էին, ինչ ունեին՝ սկսած ավիացիայից, վերջացրած՝ տարբեր անձանոթ զինատեսակներով: Ժամկետային զինծառայող սերժանտ Յ.Գ.-ն վիրավորում է ստանում հերթական արկի պայթյունից: Նրան տեղափոխում են փոքր աղվեսաբուն: Նույն աղվեսաբունում արդեն պատսպարված էր շարքային Գ.Ի.-ն: Հրթիռակոծությունը շարունակվում էր, ամենուրեք թափվող արկերի պայթյունի ծայրեր էին: Պատերազմի եռուզեռի մեջ վազելով մեզ են հասնում երկու շարքայիններ եւ հայտնում, որ նախորդ արկը պայթել է իրենց առջև: Վայրկենապես խփում է հաջորդ արկը, այս անգամ հենց մեզ վրա...Սպիտակ լույսի պես վառ ճնշում են զգում ինձ վրա, ալիքից ատամս կոտրվում է: Այլեւս բան չեն տեսնում: Ահավոր միտի, աղմուկի, վառողի հոտի ու սաստիկ ճնշող ծանրությամբ մեջ լսում եմ մի ձայն, որը նմանեցնում եմ Գ.Ի.-ի ձայնին: Նա առաջ, որ ինձ հետ հաճելի էր ծառայելը, կպատահե՞նք երկնքում: Վայրկյաններ հետո գիտակցում եմ, որ եթե միմյանց լսում ենք, ուրեմն՝ ողջ ենք: Ոչ մի բան չէի տեսնում: Հասկանում էի, որ վիրավոր եմ, շարժվել չէր լինում: Կանչեցի՝ ո՞վ կա: Շարքային Ա.Զ.-ն ձայն տվեց, որ լսում է, հարցրեց՝ ի՞նչ անի: Ասացի՝ հանի՛ր մեզ այստեղից: Ձեռքս ոնց որ պոկված կախված լինեմ, այդպես էի զգում: Քանի որ չէի տեսնում, ասացի, որ ձեռքս կապվեն, հիշում էի, որ գրպանում կայուն ժապավեն կա, ասացի որպեսզի կապել: Նրա բարձրաձայն արտահայտած մտքից, թե ո՞ր մի տեղը կապի, հասկացա, որ բազմաթիվ վիրավորումներ ունեմ, կարծեցի վերջն է...Հետո-ի համար պահված ծխախոտն այդպես էլ չծխեցի (այստեղից եզրակացություն. ոչինչ չպետք է թողնել հետո-ի): Հ.-ին կանչում էի, ձայն չէր հանում, չգիտեմ, թե նրա հետ ինչ եղավ: Աղոտ եմ հիշում, թե ինչ եղավ հետո, հավանաբար մերթընդմերթ անջատվում էի: Խրամատից ինձ հանեցին: Չեմ հիշում, բայց հետո ինձ պատմել են, որ գոռում էի թողնել ինձ, Հ.-ին փնտրել ու հանել: Մի կերպ ինձ հանեցին՝ հասցնելով քիչ թե շատ ապահով տեղ եւ տեղավորեցին մեքենայի ներսում մյուս վիրավորի հետ: Արմաքան էինք լինում...

Սկզբում որտեղ որ նախատեսված էր ինձ հասցնել, պարզվեց՝ նահանջել է: Վերջիվերջո հասանք դաշտային հոսպիտալի: Ինձ տեղավորեցին մի ցուրտ սենյակում, որը դիտարկում էի ինձ հանեցին: Չեմ հիշում, բայց հարցրեցին անունս, ազգանունս, կոչումս: Գիտակցությունս անջատվեց: Ուշքի եկա Երեւանի հիվանդանոցում 8 օր կոմայի մեջ մնալուց հետո: Տեսողությունս ընդհանրա-

պես չէր վերականգնվում: Երբ բժիշկը մոտեցավ, առաջին հարցս այն էր, թե վերջույթներս արդյո՞ք ինձ վրա են, ասաց, որ այո, բայց՝ շատ ուժեղ ջարդված: Հետագա տեսիլքներիս ու մղձավանջային վիճակիս մասին ավելի լավ է չխոսել»:

Ամենամար պարունները

«Ընկերներիդ ու զորքիդ անդամների կորստից ծանր բան չկա: Հիվանդանոցում, երբ արդեն քիչ թե շատ ուշքի էի եկել, լուրեր էի լսում, թե ինչպիսի տղաներ ենք կորցրել: Հուսադրում էր այն, որ զորքիս վիրավոր անդամների մեջ ամենածանրը ես էի վիրավորվել: Երբ գալիս էին ինձ տեսնելու, ուրախանում էի, չնայած ես նրանց չէի տեսնում: Հ.-ից մինչեւ հիմա տեղեկություն չկա: Ինձ սպասվում էր վիրահատություն վիրահատության հետեւից: Անզգայացնողների ու ցավազրկողների անընդհատ ընդունումից, հոգեկան տարօրինակ պարուններ ունեի: Անզոր էի զգում ինձ, իսկ այդ անզորությունից խելագարվել կարելի է, երբ հայրենակիցներդ այդ ժամանակ կենաց ու մահու կռիվ են տալիս, իսկ դու չես կարող օգնել»:

Կյանքը ծանր վիրավորվելուց հետո

Ս.Գ.-ն ապաքինման ծանր շրջան անցավ հետագա երեք տարիների ընթացքում՝ ստիպված մնալով Երեւանում: Առաջին կարգի հաշմանդամությունից հետո անցում կատարվեց երկրորդ կարգ: Բազմաթիվ բարդ վիրահատություններից հետո բժիշկների բարոյական ու ֆիզիկական աջակցության շնորհիվ կարողացան նրան ուղիղ կանգնեցնել: Ինչպես ընդունված է ասել, նրա բեկոր-բեկոր դարձած մարմինը հաջողվեց հավաքել: Աստիճանաբար վերականգնվեց տեսողությունն ու լսողությունը: Մակամվանը համահունչ՝ կարողացավ իր մեջ ուժ գտնել ու հաղթահարել, թվում է թե՛ անհաղթահարելի սթրեսային վիճակները: Շատերին զարմացնում է այն, որ դարձյալ պատրաստակամություն է հայտնում հարկ եղած դեպքում իր ներդրումն ունենալ Արցախի վերանապատագրման գործում: Մինչդեռ զարմանալու ոչինչ չկա այդտեղ. կոչումով սպան միշտ էլ պատրաստ է ծառայել ու պաշտպանել՝ անկախ հանգամանքներից:

Սպան մախկին չի լինում

«Այն մարդիկ, որոնք չեն կռվել կամ կռվել են, բայց լավ չեն կռվել, պատեհ-անպատեհ առիթներով իրենց թույլ են տալիս այնպիսի մտքեր արտահայտել, ինչպես, օրինակ՝ «կռվել եք համուն ոչնչի», ու դեռ ավելին՝ փորձեր են կատարում համոզել ինձ դրանում: Հմարավոր է՝ դա ասում են իրենք իրենց արդարացնելու համար, իսկ ես ի պատասխան՝ խորհրդային «Սպաներ» ֆիլմի հայտնի դրվագն եմ հիշեցնում. «Մասնագիտությունը չպետք է ընտրել ինչ-որ հրամանով, այլ լինել կոչումով մասնագետ: Ամբողջ կյանքում հպարտացել եմ իմ գործով, հայրս էլ է հպարտացել, պապս էլ: Ուրիշները հարստությամբ կամ ճանաչվածությամբ են հպարտանում, իսկ մենք՝ մասնագիտությամբ: Այդպիսի մասնագիտություն կա՝ «Հայրենիքը պաշտպանել»:

Տարբեր երկրներում ապրելու հնարավորություն ունեմ, բայց ցանկություն չունեմ: Ուզում եմ ապրել Հայաստանում՝ հայ մնալու նպատակով: Ով գնում է, թող գնա, մնացողը՝ մնա: Անելիքներ ունենք: Շատ եմ մտախոգվում հայ ազգի համար: Ախր մենք կռվել գիտենք, չպետք է լինենք այս վիճակում: Պարզ ճակատով հայտարարում եմ, որ իմ դասակը կռվել է մինչև վերջ, մենք նահանջ չենք ունեցել մույնիսկ ամենաթեժ պահերին: Պետք է վերականգնել ազգի ոգին, ճիշտ դատախարակել սերունդը, որի մեջ պետք է սերմանել ինքնագոհողության զաղափարը»:

ԱՐՑԱՆՅԱՆ

Հոկտեմբերի 30-ը՝ Մարզի օր

ՄԱՐԶԻՉՆԵՐԸ

Յուրաքանչյուր մարդու կյանքում որպես անձ կայանալու եւ հաջողակ մարդ ծնալով շրջանն անքակտելիորեն կապված է մանկապարտեզում, դպրոցում, ուսումնարանում, բուհում սովորելու հետ: Այդ փուլում կարեւոր դեր են խաղում ոչ միայն ծնողներն ու ընկերները, այլև դաստիարակները, ուսուցիչները, դասախոսները, եւ իհարկե մարզիչները: Շատերի համար նրանք դառնում են կրթված, դաստիարակված, քաղաքավարի, բազմակողմանի զարգացած մարդու կերպարի օրինակներ, իսկ երբեմն էլ՝ բարոյական չափորոշիչներ:



դառնում է կյանքի մաս, պրոֆեսիոնալ գործունեություն:

Եվ նրանց, եւ մյուսների ճանապարհին, անշուշտ, կանգնած է մարզիչ անձնավորությունը: Նրա սովորեցնելու հատկությունը, անհատական մոտեցումը ցուցաբերելը, դժվար պահերին օգնել կարողանալը, ինչ-որ տեղ նաեւ օգնել ծուլությունն ու հոգնածությունը հաղթահարելիս կամ որեւէ խոչընդոտի միջով անցնելիս, որը սպորտային հաղթանակների հասնելու ճանապարհին խանգարում է, միշտ էլ բարձր են գնահատվել ինչպես սիրողական պարապողների, այնպես էլ պրոֆեսիոնալների կողմից: Այդ մարդու կերպարը, որը մշտապես կողքիդ է մարզումների ժամանակ, հիշողության մեջ պահպանվում է ամբողջ կյանքի ընթացքում:

Մարզիչը մարզիկի համար թերեւս ավելի հաճախ, քան ուսուցիչը դպրոցում աշակերտի համար եւ դասախոսը ուսանողի համար, դառնում է օրինակելի կերպար եւ վայելում է անառարկելի հեղինակություն:

1999 թվականին ՌԴ սպորտային եւ զեղարվեստական մարմնամարզության ֆեդերացիան հանդես եկավ մասնաձեռնությանը, որ մարզիչներին հատուկ օր հատկացվի տարվա մեջ: Այդ գաղափարը կյանքի կոչվեց սպորտային աշխարհում:

հում. ամեն տարի հոկտեմբերի 30-ին նշվում է մարզիչ օրը աշխարհի շատ երկրներում:

Մարզիչի օրը պաշտոնակազմակազմված է, բայց, այնուամենայնիվ, այն նշվում է բոլոր սպորտային կազմակերպություններում, տարբեր մարզածեսների ֆեդերացիաներում: Ավանդաբար հոկտեմբերի 30-ին մարզիկները պատվում են իրենց խրատատուներին՝ շնորհավորելով նրանց:



Մինչդեռ մարզիչի համար վաղուց ընծան միշտ էլ մնում է իր սաների հաջողությունն ու ձեռքբերումները: Նրանց հաղթանակները նաեւ մարզիչի հաղթանակներն են:

Հարգելի մարզիչներ, շնորհավոր ձեր մասնագիտության օրը:



Հարունակեք մարզել ու անգնահատելի խրատներ տալ, թե ինչպես կարելի է ապրել առողջ, ֆիզիկապես ու հոգեպես կոփված: Մեծ է ձեր ներդրումը բազմաթիվ մարդկանց կողմից սպորտը որպես ապրելակերպ դարձնելու հարցում: Ձեր սաների հաջողու-

թյան եւ ձեր մարզական ձեռքբերումների շնորհիվ մեր եռագույնը ծածանվում է աշխարհի բազմաթիվ մրցահարթակներում՝ հպարտության եւ ուրախության զգացումներ պարգևելով մեր հայրենակիցներին: Ինչքան էլ ձեր մարզչական գործունեության ճանապարհին խոչընդոտներ կան, համարձակվեք, որ դուք եք շատերի համար այն լուսատու, որի լույսն է ուղեցույց դառնում շատերի համար անճանաչելի պահերին: Ուրեմն, շարունակեք ձեր գործունեությունը՝ միշտ առաջնորդվելով ձեզ բնորոշ լավատեսությամբ, կենսուրախությամբ, ոգու անսահման ուժով: Իսկ «Լուսարար»-ը սիրով շարունակելու է ներկայացնել ձեզ, բացահայտել ձեր մասնագիտական գաղտնիքները, գրուցել ձեզ հետ սպորտի թեմայով եւ՝ ոչ միայն:



Սույա ԱՎԱԳՅԱՆ

Արցախի բանախոսություն

Սկիզբը՝ նախորդ համարում

- 115. Անունը տո՛ւ սուփրան քցի՝- Անունը տուր, սփռոցը գցի:
- 116. Էշին գետկեն ա կյան՝-Էշի գատիկին է գալիս:
- 117. Է՛շ, սատկիս վրե՛չ, եսա կյարունք ա կյան՝-Է՛շ, չսատկես, շուտով գարուն է գալիս:
- 118. Ծետը ըրազին կորեկ կտեսնա՝-Ծիտը երազում կորեկ կտեսնի:
- 119. Քոռը հինջ կոզի՝ երկու աչք, էն էլ պլոզ-պլոզ՝- Կույրը ինչ կուզենա, երկու աչք, այն էլ՝ մեծ-մեծ:
- 120. Տուգնը ըրագունը հաց ա տեսնում, ծարավը՝ ճյուր՝- Սովածը երազում հաց է տեսնում, ծարավը՝ ջուր:
- 121. Էշը կորալ ա, փալան ըն շուր կյան՝-Էշը կորել է, փալանն են ման գալիս:
- 122. Ունքը շինիլին տեղ, աշկն էլ պտառից՝-Հոնքը շինելու տեղ աչքն էլ պտառեց:
- 123. Խոխան մահնա, մարը՝ շահնա: - Երեխան պատճառ, մայրը՝ շահող:
- 124. Բոյը՝ երկան, խելքը՝ կարծ՝-Բոյը երկար խելքը՝ կարծ:
- 125. Օխոն կծածը կըլքվանա, լուզվեն կծածը լվանալ չի՝-Օծի կծածը կլավանա, լեզվի կծածը չի լավանա:
- 126. Փաղը յոր օնիս, կյող շոնը

- կը գլիդա՝- Փայտը որ վերցնես, գող շունը իր հաշիվը կվերցնի:
- 127. Դե եք էշը ցեխան հանե: - Դե արի էշը ցեխիցը հանի:
- 128. Վրեր տախտեղ չըս կերալ, քանակտ խե՞ ա մռնռան՝- Եթե տաքդեղ չես կերել, քանակդ ինչի՞ն է մրմռում:
- 129. Երկու վրենը մի չմշկում ա տիրալ: -Երկու ոտը մի չմշկում է դրել:
- 130. Մին պել մեզ օնիմք, մինն էլ խնուշինակա եկավ՝- Մի գիժ մենք ունենք, մեկն էլ խնուշինակից եկավ:
- 131. Անունը կա, ըմանումը՝ չիկա՝- Անունը կա, ամանումը՝ չկա:
- 132. Հոռե ծառեն բար չինիլ՝- Ուռենուն պտուղ չի լինի:
- 133. Մըծանաս, մեծեն դադիրը գլիդա՝-Մեծանաս, մեծի հարզը իմանաս:
- 134. Էլիա էն էշն ա՛ էն փալանը՝- Էլի նույն էշն է, նույն փալանը:
- 135. Մարթին նամուսը փափաղն ա, կընգանենը՝ լեչակը՝- Տղամարդու նամուսը գլխարկն է, կնոջինը՝ լաչակը:
- 136. Խոխան կործի տիր, հետան քյինա՝-Երեխային բանի դիր, հետևիցը գնա:
- 137. Դուզ խոսկը խոխան կասե՝- Եիշտ խոսքը երեխան կասի:
- 138. Խոխան լաց ինիլավ կըմծանա՝- Երեխան լացելով կմծանա:

ԱՍՈՒՅԹՆԵՐ

- 139. Մեծեն ըրածը աշխաղանք ա, կերածը՝ կորած՝- Մեծի արածը աշխատանք է, կերածը՝ կորած:
- 140. Լյավ ախճիզը օխտը տղա ածի՝- Լավ աղջիկը յոթ տղա արծե:
- 141. Հարթը ծիլն յրան, յա՞ նասիբ՝- Հարտը ծիլու վրա՝ Ի՞նչ բախտ:
- 142. Տորեն հաց չոնիս, ցորեն լուզու էլ չոնի՞ս: - Տորեն հաց չոնես, ցորեն լեզո՞ւ էլ չոնես:
- 143. Շանան մազ խոզիլը՝ աշխաղանք ա՝- Շնից մազ պոկելը աշխատանք է:
- 144. Բարը ծառան հեռե չի ըղնում՝-Պտուղը ծառից հեռու չի ընկնում:
- 145. Էշը թըկելավ ճորե չի տըռնալ՝- Էշը թակելով ջորի չի դառնա:
- 146. Օխժը ուրան հալավը կփոխե, ամմա խասաթը փոխել չի՝- Օծն իր հալավը կփոխի, բայց բնավորությունը չի փոխի:
- 147. Ծուվումը վրեր ճոտ ա ինուն՝ ծուվվան ա՝- Չվի մեջ որ ճուտ է լինում, ծվվում է:
- 148. Էշին բռնակը վերջում էլ ա տըռնում: - Էշի քուռակը վերջում էլ է դառնում:
- 149. Փիս օրը կըլքվանա, ամմա փիս մարթը լըվանալ չի՝- Վատ օրը կլավանա, իսկ վատ մարթը չի լավանա:
- 150. Էշ կերալ ա, էլ մըծացալ: Էշ կերել է, էլ մեծացել:
- 151. Կյարմուր կավը, ուրան

- կաշին փոխել չի: - Կարմիր կովը իր կաշին չի փոխի:
- 152. Երկու էշին կարին կարում չի ճոթ անե՝-Երկու էշի գարին չի կարողանում կես անե:
- 153. Ինքը լակ-լակ, կլոխը՝ թակ-թակ՝- Ինքը լակ-լակ, գլուխը՝ թակ-թակ:
- 154. Շոնը հչիլավ կըստակե՝- Շունը հաչելով կսատկի:
- 155. Տեն քըցի, ջուրս քցի՝-Դեն գցի, գրպանս գցի:
- 156. Բողազ՝ հինջու տըռնաս տըղտողա՝- Բուկ՝ ինչ տեսնես՝ դողողա:
- 157. Էշը փլանավ ա կոլ տամ՝- Էշին փալանով է կոլ տալիս:
- 158. Նամարդ մարթին հացը օտվել չի: - Նամարդ մարդու հացը չի ուտվի:
- 159. Կոզին տիրին խալիչին՝ թուլ ընգավ՝-Ոզնուն դրին խալիչի վրա, գլորվեց ցած:
- 160. Ուրան աշկեն սութունը տըռնում չի, ուրիշին՝ չոփն ա տեսնում: - Իր աչքի գերանը չի տեսնում, ուրիշի չոփն է տեսնում:
- 161. Երբաքը ուրան տակեն լուս չի տամ: -Երբաքը իր տակը լույս չի տալիս:
- 162. Արսըզ մարթը շատ կապրե՝- Մտածումը չունեցող երկար կապրի:
- 163. Քըզեստ քոն ըս ինուն, ուրուշու հետե արագ տեսնում:-

- Քեզ համար քնում ես, ուրիշի համար երագ տեսնում:
- 164. Մածուն օնիս, կլոխըտ քսե՝- Մածուն ունես, գլուխը քսիր:
- 165. Լյավա փըլկերինն միտա քաք օտիս, քան թե քըքըկերեն միտա փլավ օտիս՝-Լավ է փլավ ուտողի հետ կղկղանք ուտեղ, քան թե կղկղանք ուտողի հետ՝ փլավ:
- 166. Ծեռք օնիս՝ կլոխտ քորե: Ձեռք ունես, գլուխը քորիր:
- 167. Կյուլին քարոզ կըրթեցեն, թա՛ պրծեք, վեչխարը սարավն ընցավ՝- Գայլի գլխին քարոզ կարդացին, ասաց՝ շուտ արեք, ոչխարը սարն անց կացավ:
- 168. Քաչալն ուրան կըլխեն ճար կանե՝- Քաչալը իր գլխի ճարը կանի:
- 169. Առաջ ածե, ետման կըկըզա՝- Նախ ածիր, հետո կըկըզա:
- 170. Յա ըսովի խոսքը, յա ըսովի վեղը՝-Կամ ասովի խոսքը, կամ լցնովի հողը:
- 171. Էշը ուրան գռռոցեն յրան հայիլ-մայիլա՝- Էշը իր գռռոցից հայիլ-մայիլ է:
- 172. Աղվեսը խելունք ինիլավ երկու վեննավ ա թալակը ընգնում: - Աղվեսը խելոք լինելով՝ երկու ոտքով է թալարդն ընկնում:

Հարունակելի

Արև/Արշալույս/ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ | Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ | Ե. Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 | E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 | Ստորագրված է տպագրության՝ 29.10.2024թ.: